ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/205

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Փոքրիկյանի, ներկայացուցիչ՝ Ս. Փոքրիկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41» ծածկագրով գնանշման հարցում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18633-2019 գրությամբ «Գլոբալ

Ինժեներ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 06.11.2019թ.-ի թիվ 01/61-23387 գրության հիման վրա, 12.11.2019թ.-ին «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 12.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 19.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 19.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.12.2019թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 06.11.2019թ.-ի թիվ 01/61-23387 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժամկետը լրացել է 10.08.2019 թվականին, սակայն Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացրել են «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ.-ի գրությամբ դիմել է «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18633-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել բանավոր դիրքորոշում, առ այն, որ պահանջվող աշխատանքները կատարվել են և 21.10.2019թ.-ին Պատվիրատուին են հանձնել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143, և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները:

4. <u>ՍՑ-LO-2019/205 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի միջև 26.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45-րդ (քառասունհինգ) օրացուցային օրը (10.08.2019թ.-ին):

www.gnumner.am համացանցային կայքում 31.10.2019թ. հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի միջև 26.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 30.10.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

21.10.2019թ.-ին Մասնակիցը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բերեկարգման վարչության պետ Գ. Հարությունյանին ուղղված գրությամբ հանձնել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143, և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները: Մտից թիվ 468:

Գործում առկա է՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143, և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18633-2019 գրությամբ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի

ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143 և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կլստարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի միջև 26.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45-րդ (քառասունհինգ) օրացուցային օրը (10.08.2019թ.):

www.gnumner.am համացանցային կայքում 31.10.2019թ. հրապարակված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ի միջև 26.06.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/41-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի

կողմից 30.10.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

21.10.2019թ.-ին Մասնակիցը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բերեկարգման վարչության պետ Գ. Հարությունյանին ուղղված գրությամբ հանձնել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143, և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները: Մտից թիվ 468:

Գործում առկա է՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143, և 147 մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ փորձաքննության եզրակացությունները:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն 21.10.2019թ.-ին մտից թիվ 468 համարով ընդունելով փորձաքննության եզրակացությունները, միևնույն ժամանակ 30.10.2019թ.-ին հրաժարվել է Մասնակցի կողմից Պայմանագրի կատարումից, միակողմանիորեն լուծելով այն:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ պայմանագիրը լուծված համարելու փաստն արձանագրելու համար, որպես կարևոր և էական նշանակություն ունեցող փաստ, պետք է Պատվիրատուի կողմից դրսևորվի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են կատարողի կողմից պայմանագիրը կատարելուց միակողմանիորեն հրաժարվելուն՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Սույն դեպքում, Պատվիրատուն, ստանալով կատարված աշխատանքի արդյունքը, այնուամենայնիվ լուծել է պայմանագիրը հիմք ընդունելով Պայմանագրի 2.13 կետի «բ» ենթակետը (ժամկետի խախտում), այն դեպքում, երբ պետք է կիրառվեր Պայմանագրի 2.1.2 կետով սահմանված դրույթներից որևէ մեկը, որոնք են՝

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հատկանշկան է համարում արձանագրել այն փաստը, որ Պայմանագիրը Պատվիրատուն լուծել է ամբողջությամբ և լուծման որպես փաստական հանգամանք Պատվիրատուն վկայակոչել է Մասնակցի կողմից Երևան քաղաքի **Նոր Նորք վարչական շրջանի մանկապարտեզների** հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը չկատարելը, այն դեպքում, երբ Պայմանագրի 1.1 կետի հիման վրա Մասնակիցը ստանձնել էր Երևան քաղաքի **Շենգավիթ վարչական շրջանի հ. 137, 143 և 147** մակապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ. թիվ 26/26-1/18633-2019 գրությամբ «Գլոբալ Ինժեներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/205 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**